

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՍԿՈՒՍԻԱՆԵՐ, ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

1951 թ. ապրիլի 17-ին կայացավ Հայկական ՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի ընդլայնված նիստը, որտեղ լսվեց լեզվի ինստիտուտի դիրեկտոր, Հայկական ՍՍՌ Դիտությունների ակադեմիայի իսկական անդամ Դ. Ա. Ղափանցյանի զեկուցումը՝ «Ժամանակակից հայերենի լեզվաշինարարության խնդիրների շուրջը» թեմայի մասին:

Ընկ. Ղափանցյանը իր զեկուցման մեջ կանգ առավ երկու հիմնական հարցի վրա. 1) Հայոց լեզվի գոյացման ու զարգացման փուլերը, կապված հայ ժողովրդի պատմության հետ և 2) մեր լեզվաշինարարության խնդիրները, կապված ժամանակակից հայոց լեզվի հետ:

Հիմք ընդունելով ընկեր Ստալինի հայտնի գրույթը, որ բլեզուն և նրա զարգացման օրենքները կարելի է հասկանալ միայն այն դեպքում, եթե այն ուսումնասիրվում է անխզելի կապի մեջ հասարակության պատմության հետ, ժողովրդի պատմության հետ, որին պատկանում է ուսումնասիրվող լեզուն և որը հանդիսանում է այդ լեզվի ստեղծողն ու կրողը», ընկ. Ղափանցյանը հայոց լեզուն, նրա նախնական վիճակը՝ գրաբարը քննում է կապելով այն Մերձավոր Արևելքում և Փոքր Ասիայում բնակվող այլևայլ ժողովուրդների ու ցեղերի՝ հայապոստների, խեթերի, ուրարտացիների, խալդեերի, արմենների, խուրիտների, վրացիների և ուրիշների հետ, որոնք այս կամ այն չափով իրենց կնիքն են թողել հայ ժողովրդի լեզվի վրա: Անկասկած է, որ համահայկական ժողովրդական լեզվի գոյացման պրոցեսին զուգընթաց ձևավորվում են նաև տեղական բարբառները, որոնք չէին խանգարում մեկը մյուսին:

Տնտեսական-քաղաքական մի շարք ֆակտորների հետևանքով գրաբարը առտիճանարար կորցնում է համաժողովրդական լեզվի իր ֆունկցիան: Հայաստանի միացումը Ռուսաստանին ունեցավ ճակատագրական խոշոր նշանակություն: Նոր քաղաքական պայմանները և ռուս ժողովրդի կուլտուրայի բարերար ազդեցությունը հայ ժողովրդի համար՝ ստեղծեցին բարենպաստ պայմաններ զարգացնելու նոր, ընդհանուր գրական հայերեն լեզու, որը սովետական իշխանության տարիներին դարձավ պետական լեզու:

Անցնելով արդի լեզվաշինարարության հարցին, ընկ. Ղափանցյանը նշեց, որ նոր հայերեն գրական և համաժողովրդական լեզուն աճեց Արարատյան բարբառի հիմքի վրա և հարստացավ գլխավորապես գրաբարյան ձևաբանական և բառակազմական այլևայլ տարրերով: Ընկ. Ղափանցյանը բերում է բազմաթիվ օրինակներ, որոնցով ցույց է տալիս գրաբարի ազդեցությունը մեր նոր լեզվի վրա: Նոր հայերեն լեզվի հիմնական աղբյուրը, բառակազմական և քերականական տեսակետից, հանդիսանում է գրաբարը, որը ներկայումս կարող է հանդիսանալ լեզվի հարուստացման միջոցներից մեկը:

Ընկ. Ղափանցյանը մեծ նշանակություն է տալիս նաև բարբառների օգտագործմանը, հատկապես արտահայտությունների և լեզվի առանձնահատկությունների օգտագործմանը:

Խոսելով աշխարհագրական տեղանունների մասին, ընկ. Ղափանցյանը խորհուրդ է տալիս հետևել ռուսերենին և գործածել տեղանունների այն ազգային ձևը, որ գործ են ածում տվյալ ազգերն իրենց տեղանունների համար. օր.՝ շասել ճապոնիա, ճավա, այլ՝ Յապոնիա, Յավա և այլն: Ստար բառերը գործածել ռուսերենի նման՝ ֆուգա, ֆուգուլա և ոչ թե ֆուգ, ֆուգուլ և այլն:

Ռուսերեն և օտար բառերի մեջ պետք է պահպանել ռուսական շեշտադրությունը: Պետք է ասել լեյ՝սոցետով, Դո՛գուլ, Մո՛լոտով, Ռեթն՝վեն, Շի՛լլեր, դիբն՝կտուր, աբա՛կտուր և այլն:

Պետք է տարբերել երկու լ, կոչոտ և փափուկ (լ'), սխալ է արտասանել և գրել ուեյուցիա, լուլլեիկ, իլուստրացիա, սպեկուլանտ, ալտ, վալս, երբ ռուսերեն արտասանում են փափուկ լ՝ով:

Արտասահմանյան բառերը ուղղական հոլովում պետք է գործածել ուսուցիչների նման: Ոչ թե ֆրանսիական ձևով՝ կոմիտե, սյուսե, պուրտե, այլ՝ կոմիտեո, պուրտեո, սյուսեո:

Լեզվաշինարարության և կոնկրետ լեզուների պատմական զննարարական խնդրում, — ասում է վերջում ընկ. Ղափանցյանը, — հիմք պետք է ընդունել ընկեր Ստալինի լեզվաբանության մասին կլասիկ աշխատությունները: Տարակույս չկա, որ մեր գրողներն ու մասնագետ-հայագետները նոր կադրերի և ամբողջ հասարակության հետ կանեն բոլոր հնարավորը՝ ավելի կասարելագործելու մեր նոր լեզուն:

Ընկ. Ղափանցյանի զեկուցումից հետո բացվեց մտքերի աշխույժ փոխանակություն: Ընկ. Ս. Ղազարյանն իր ելույթում նշեց, որ ընկ. Ղափանցյանը գրաբարի և բարբառների օգտագործման խնդրում հանդես բերեց ճիշտ մոտեցում: Գրաբարն ու բարբառները օգտագործելիս մենք պետք է ելնենք այժմյան հայերենի օրինաչափության պահանջից: Լեզվի ինստիտուտի անհետաձգելի խնդիրներից մեկն է՝ օժանդակել մեր գրողների լեզվի մաքրությանը: Անհրաժեշտ է ժամանակին ցույց տալ նրանց ոչ պիտանի և անճիշտ բառերն ու դարձվածքները և լեզվաշինարարության դործը տանել ճիշտ ուղիով: Արտասահմանյան բառերը պետք է օգտագործել ուսական ձևով: Անհրաժեշտ է պայքարել բառերը կամայականորեն կրճատելու տենդենցի դեմ, մի բան, որ նկատվում է առանձին գրողների մոտ (Դ. Դեմիրճյան և ուրիշներ):

Ընկ. Ե. Տեր-Մինասյանն ասաց, — անկասկած է, որ գրաբարը ստեղծել է հայ ժողովուրդը և մենք չպետք է հրաժարվենք դրանից. իսկ ինչ վերաբերում է ավելորդ արխաիզմին, ապա դրանից պետք է խուսափել: Բարբառների օգտագործման հարցը շատ ճիշտ է դրել ընկ. Ղափանցյանը: Պետք է օգտագործենք ժողովրդական խոսվածքը, բայց պետք է կատարել ընտրություն: Միայն կլինեն կարծել, թե կարելի է խոսակցական լեզվի մեջ գործածվող բոլոր բառերը մտցնել դրական լեզվի մեջ. շուկայական լեզուն տեղ չպետք է գտնի մեր լեզվում:

Ընկ. Վ. Փոթևյանը նշեց, որ մեր գրողները իրենց երկերը լցնում են ավելորդ արխաիկ բառերով և ծանրացնում գրվածքի լեզուն:

Հաճախ գրողների մոտ հանդիպում ենք գրաբարի փեր, որոնք գործածվել են անշնորհ կերպով: Ն. Զարյանի «Արա Գեղեցիկի» մեջ մենք կարդում ենք՝ «ի սկզբանից» արտահայտությունը, որը ներկայացնում է իրենից գրաբարի և աշխարհաբարի խառնուրդ: Գրաբարն օգտագործելու համար այն շատ լավ պետք է իմանալ: Ինչ վերաբերում է ժողովրդական խոսվածքին, ապա նրա մեջ շատ կան հաջող, հարուստ, էմոցիոնալ բառեր, որոնք, անկասկած, պետք է անցնեն մեր գրական լեզվի մեջ: Պետք է պայքարել ավելորդ բառակրճատումների դեմ: Մի բանի գրողների մոտ նկատվում է նույնիսկ ուղիղ խնդրի կրճատումը, որով աղճատվում է նախադասություն միտքը: Օր.՝ «Հերոսը իր կյանքը կապեց ժողովրդին» և այլն:

Ընկ. Մ. Ղազարյանը ասաց, ես գտնում եմ, որ բարբառները չի կարելի մերժել, այլ պետք է կատարել ընտրություն, քանի որ նրանք մեր գրական լեզուն կարող են հարստացնել: Վերցնենք թեկուզ մեր կլասիկներին՝ Նալբանդյանին, Թումանյանին, Տերյանին, Իսահակյանին, որոնց լեզուն հարստացել է ժողովրդական ձևերով և որոնք իրենց ժամանակին դրել են բարբառների օգտագործման հարցը: Մենք պետք է հետևենք ուսաց լեզվի զարգացման յուրաքանչյուր բային և վերցնենք նրանից այն լավագույնը, ինչ կարող է նպաստել մեր ընդհանուր լեզվաշինարարությանը:

Ընկ. Ա. Մովսիսյանը նշեց, որ ընկ. Ղափանցյանի կողմից շոշափված խնդիրները շատ այժմեական են և բխում են մեր լեզվի պահանջից. ինչ վերաբերում է պարսկական բառերից խուսափելու հարցին, ապա մենք ոչ մի կերպ չենք կարող հրաժարվել պարսկական բառերից, որոնք վաղուց ի վեր մտել են հայ լեզվի մեջ և աճել նրա հետ մեկտեղ:

Ընկ. Հ. Մկրտչյանը մեծ նշանակություն է տալիս բարբառների օգտագործմանը: Նա ասում է, որ ճիշտ չի լինի կարծել, թե բարբառները արդեն ամբողջովին օգտագործվել և մտել են մեր գրականության մեջ:

Ա. ՔՈՉՈՅԱՆ

ՊԱՏԽՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

1951 թ. ապրիլի 13-ին կայացավ ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտի դիալեկտիկ խորհրդի նիստը, նվիրված հայերենի մաքրության հարցերին: Զեկուցումով հանդես եկավ պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը:

Ընկ. Առաքելյանն իր զեկուցման մեջ ասաց.

Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը» աշխատությունը լեզվագիտու-

թյան մեջ նոր է պոխա րաց արեց: Մարքսիզմ-լենինիզմը հարստացավ լեզվի մասին ստալինյան ուսմունքով: Իր հանճարեղ աշխատության մեջ Ի. Վ. Ստալինը քննարկել և լուսաբանել է բազմաթիվ տեսական հարցեր, որոնք հսկայական նշանակություն ունեն գիտության մի շարք բնագավառների զարգացման համար: Խուշոր է լեզվի մասին ստալինյան ուսմունքի դերը սովետական երկրի բազմաթիվ սոցիալիստական ազգերի լեզվաշինարարության բնագավառում: Ս. Մառը և մառիստները մեծ վնաս էին հասցրել լեզվաշինարարության հարցերում նաև մեզ մոտ՝ Սովետական Հայաստանում:

Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի 15-րդ համագումարում առաջադրվեցին մի շարք հարցեր լեզվաշինարարության ակտուալ խնդիրների, մասնավորապես հայերենի մաքրության վերաբերյալ:

Հայերենը սոցիալիստական ազգության պետական կուլ լեզու է դարձել: Նա զարգանում և հարստանում է բուռն կերպով: Դա հետևանք է Սովետական Հայաստանի տնտեսության, տեխնիկայի, գիտության, կուլտուրայի և արվեստի աննախընթաց զարգացման: Հարստացման և լրացման կարիք ունի հատկապես հայերենի բառապաշարը: Դրա առաջին և հիմնական ուղին նոր բառերի և տերմինների կազմումն է հայերենի բառապաշարի միջոցով և նրա քերականության հիման վրա: Հայերենը ուներ դասական ПОСОЛ բառը, բայց շուներ ПОСЛАНИК -ին համապատասխանող բառ, այժմ ունենք ղեսպանուդ հիանալի տերմինը, նույն ձևով կազմված հաջող բառեր են բևեռանավ, դիտանց, գետանց, շրջանցում, Ն. Զարյանի մոտ հանդիպող խանդաշող աշխու, ձմեռնագույժ ժամի, բոսորաշող և այլ բառերն ու ոճերը:

Հայերենի բառապաշարի հարստացման երկրորդ միջոցը ռուսերենից և օտար լեզուներից (ռուսերենի միջոցով) զանազան տերմինների փոխառությունն է: Մեր լեզուն այժմ ռուսերենից յուրացնում է ոչ միայն բառեր, տերմիններ, այլև ոճեր և շարահյուսական որոշ միջոցներ, որոնք անհրաժեշտ են դառնում և հայերենի մեջ մտնելով հարստացնում են նրա ոճական և շարահյուսական հնարները, առանց վնաս հասցնելու նրա քերականությանը և կառուցվածքին:

Բառիմաստը ինչ որ քարացած մի բան չէ և բառերի իմաստափոխությունը ամեն մի լեզվի, նաև հայերենի զարգացման առավել նշանավոր երևույթներից մեկն է: Բառերի պատմականորեն նորանոր իմաստ և իմաստի երանգավորումը ընդունելը հնարավորություն է ընձեռնում երկրորդ-երրորդ անգամ օգտագործել դրանք՝ նոր նպատակների համար: Սակայն դա պետք է անել ընտրելով բառերի նորագույն, ընդհանուրին հասկանալի, հայ գրական լեզվին առավել հարազատ և հաջող ձևերը:

Վերին աստիճանի կարևոր հարց է գրաբարի և արդի հայերենի հարաբերության հարցը: Մառը և մառիստները (պրոֆ. Ա. Ղարիբյան) գրաբարը հայտարարում էին դասակարգային (ֆեոդալ դասակարգի) լեզու: Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ լեզուն դասակարգային չէ: Հետևաբար և գրաբարը դասակարգայնորեն լեզու չէ, ոչ էլ իր քերականությամբ և բառապաշարով ինչ որ խորթ լեզու, այն հայերեն է, նրա բառակազմի հիմնական ֆոնդը որոշ փոփոխություններով (իմաստի) ընկած է և արդի հայերենի հիմքում: Արդի հայերենը երկար ուղի է անցել և գրաբարից հիմնականում վերցրել է այն, ինչ պետք էր վերցնել և համարձակ կարելի է ասել, թե քիչ բան է մնում վերցնելու: Գրաբարյան այնպիսի ձև, ինչպիսին է, օրինակ՝ «ի վեր», իհարկե կարելի է և պետք է օգտագործել: «Ստալինյան բազեն երկինքն ի վեր սլացավ» հասկանալի է ամենքին, գեղեցիկ է և ավելի ուժեղ, քան եթե ասվեր ռուսական ֆազեն դեպի երկինք սլացավ: Սակայն մեր գրողներից ոմանք (Դ. Դեմիրճյան, Ն. Զարյան, Ստ. Զորյան և ուրիշներ) իրենց որոշ աշխատություններում օգտագործում են գրաբարյան այնպիսի բառեր ու ոճեր, որոնք անհասկանալի են, վաղուց մեռած, անգամ գրաբարի մեջ հազվագեպ, խիստ հեռու արդի հայերենի բառապաշարից և խորթ նրա քերականությանն ու ոճին: Այսպիսի գրաբարամոլությունը լուրջ վնաս է հասցնում հայերենի մաքրությանը:

Խոսելով գրական լեզվի և հայերեն բարբառների փոխհարաբերության մասին, ընկ. Առաքելյանն ասաց.

Ի. Վ. Ստալինը իր պատասխանի մեջ Սանժեյիվին, տեղական բարբառների մասին ասում է. թե նրանք ուսպասարկում են ժողովրդական մասսաներին և ունեն իրենց քերականական կառուցվածքն ու հիմնական բառարանային ֆոնդը: Այդ պատճառով էլ տեղական որոշ բարբառներ ազգերի գոյացման պրոցեսում կարող են ազգային լեզուների հիմք հանդիսանալ և զարգանալ ու դառնալ ազգային ինքնուրույն լեզուներ: Այդպես է եղել, օրինակ, ռուսերեն լեզվի Կուրսկ-Օրյոլյան բարբառի (Կուրսկ-Օրյոլյան ռեպուբլիկ) հետ, որը դարձավ ռուսերեն ազգային լեզվի հիմքը: Նույնը պետք է ասել ուկրաիններեն լեզվի պոլտավյան-կիևյան բարբառի մասին, որը դարձավ ուկրաինական ազգային լեզվի հիմքը: Ինչ վերաբերում է այդպիսի լեզուների մնացած

բարրառոններին, ապա դրանք կորցնում են իրենց ինքնօրինակությունը, ձուլվում են այդ լեզուներին և անհետանում դրանց մեջ:

Բարրառոնները գրական լեզվին կարող են տալ առանձին բառեր և ոճեր, երբ գրական լեզուն այդ բառերը և ոճերը չունի կամ կարիք ունի իմաստի որոշ առումներ բարրառոններից վերցրած բառերով արտահայտելու:

Որքան իմաստալից ու զեղեցիկ ոճեր են, օրինակ. «Մտքի ծովն ընկնել», «աչքը շթարթած», «երեւ տալ», «թելիկ-մելիկ», «աչքը ջուր դառավ», «սիրտը կպավ» (մեկին, մի բանի): Որքան զեղեցիկ է «Ու մնում եմ քեզ, մնում անիրավ, էնքան մնացի, աչքս ջուր դառավ»: Բայց չես կարող չվրդովվել, երբ նույն ոճը աղավաղելով ընկ. Սիրասը գրում է. «Խնչքան աղջիկների աչքը ջուր կտրեց Մամեն», կամ «Մամեն կպավ Աշխի սրտին» նախադասությունը, փոխանակ «Աշխի սիրտը կպավ Մամեյին» նախադասության:

Ոճը պետք է ընտրել և օգտագործել ճաշակով, վնաս չհասցնելով լեզվին, նրա օրենքներին ու առանձնահատկություններին, սխալ է վարվում ընկ. Ստ. Զորյանը, երբ օգտագործում է «Նոգուտ սատկիմ» գոեհիկ ոճը: Նույնքան սխալ է վարվում նա, ինչպես և զրիչները, օգտագործելով բարրառային այնպիսի ձևեր ու բառեր, ինչպես՝ մխիթարվան, բերավ, բցեց ուսը, թեքերը, մկա, շարխ, պառեկ, բրդուճ և այլն, որոնց կարիքը հայերենը չի զգում, որոնք ուղղագրության տեսակետից սխալ են, անբարենչուն կամ գոեհիկ:

Ամենավճռական պայքար պետք է մղել թուրքական և պարսկական տիրապետության հետևանքով հայ բարրառոնների մեջ մտած, բայց գրական լեզվին խորթ մեղան, քամաշ, պեշ, ղյուլ, խալիշա, սաղախա, քվանֆ, յարաբ, հաջար, լազար, օհանղամ և նման այլ բառերով այլև ոճերով աղտոտելու դեմ: Այս խորթ և տգեղ բառերը հաճախ գրականության մեջ մտցնում են բարբառամուլ գրողները, երբեմն իրենց լեզվի աղբատությունը ծածկելով կոյուրիտ ստեղծելու սխալովակով, այն էլ կորցնելով չափի ամեն մի զգացում:

Վերին աստիճանի կարևոր հարց է նաև արդի հայերեն պետական լեզվի և հայերենի արևմտյան հատվածի փոխհարաբերության հարցը:

Միանգամայն սխալ, արատավոր և մերժելի է արևելյան և արևմտյան, իրարից տարբեր երկու լեզվի գոյության տեսությունը: «Արևմտահայ» կոչված լեզուն առանձին ինքնուրույն լեզու չէ, այլ հայերենի մի հատվածն է կազմում, ինչպես Արևմտյան Հայաստանը և արևմտյան հայերը Հայաստանի ու հայ ժողովրդի մի հատվածն են կազմում: Եթե արդի պետական լեզու հանդիսացող հայերենի հիմքում ընկած է արարատյան բարբառը, ապա հայերենի արևմտյան հատվածի հիմքում ընկած է հայերենի տեղական մի այլ բարբառ: Մեզ թվում է թի չի կարելի հայերենի արևմտյան հատվածը համարել լոկ մի բարբառ (պոլսո բարբառ). չէ որ նրանով բավականաչափ հարուստ գրականություն է ստեղծվել և նրանով գրում ու խոսում են հայերը արտասահմանյան իրարից տարբեր ու երբեմն շատ հեռու ընկած, ծովերով ու օվկիանոսներով անջրպետված երկրներում: Ոչ մի կերպ չի կարելի հայերենի արևմտյան հատվածը դասել ի. Վ. Ստալինի մատնանշված դասակարգային բարբառների, ավելի ճիշտ ժաղդոնների և կամ տեղական (ստերիտորիալ) բարբառների շարքը: Միջուրբի հայությունը արդեն ենթարկված է ասի-միլացիայի միջոցով օտար ժողովուրդների մեջ լուծվելու վտանգին: Մայրենի լեզուն զգալի դեր է կատարում հայ աշխատավոր զանգվածների ազգությունը պահպանելու, նրանց՝ ասի-միլացիայի վտանգից պաշտպանելու գործում: Սակայն այդ լեզուն արդեն շատերի կողմից մոռացվում է և սկսել է արագորեն ապականվել օտար բառերով:

Որոշ մարդիկ կանգնած են հայերենի արևմտյան հատվածի և հայերեն պետական լեզվի խաչաձևման անհեթեթ տեսակետի վրա: Այդ, թող ներվի ասել, տեսակետը տեսականորեն իդիալիստական է, գործնականորեն արտաոռոց:

Հայերենի արևմտահայ հատվածը կանգնած է ճգնաժամի և աստիճանակալ մոռացման, ապականման, մահացման վտանգի առջև, նրա միակ ճիշտ հեռանկարը հայրենադարձ հայերի լայն զանգվածների միջոցով հայերեն պետական լեզվի մեջ լուծվելու հեռանկարն է, միայն այդ հղանակով հա կարող է մասնակից լինել հայերենի զարգացման և հարստացման գործին:

Վերջապես մի բանի խոսք ոճի մաքրության մասին: Հեղինակի ոճը չի կարող հստակ և կուտ լինել, եթե այդ հեղինակը չի հասել բննարկվող հարցի կամ առարկայի ու նրա կուպակցությունների բազմակողմանի ճշմարտացի ճանաչմանը: Ոճի հստակության փայլուն օրինակներ են էՆԻՆԻ, Ստալինի աշխատությունները: Մենք հիանում ենք, թե ինչպես ամենաբարդ հարցերի մասին ի. Վ. Ստալինը խոսում է այնքան պարզ ու կատարելության հասած հստակությամբ, միաժամանակ րացահայտելով նրանց էությունն ու կապակցությունների ամբողջությունը: Պարզ է, որ ամեն մի հեղինակի համար օրինակ պետք է հանդիսանա էՆԻՆԻ, Ստալինի ոճը: Իրան

պետք է ձգտել մտքի հստակություն ձևեր բերելու ուղիով, որը հնարավոր է մարքս-լենինյան ուսմունքին տիրապետելու, դիտության, կուլտուրայի, տվյալ բնագավառի փաստական և տեսական նյութին տիրապետելու շնորհիվ:

Հայերենի մաթրոթյան հարցն ամբողջովին վերցրած մեր ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարության կարևորագույն և ակտուալ հարցերից մեկն է: «Պայքարը լեզվի մաթրոթյան, իմաստի ճշտության, լեզվի սրության համար,— ասել է պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին,— պայքար է կուլտուրայի ղեկի համար, ինչքան սուր է այդ զինքը, ինչքան անվրեպ է ուղղված, այնքան այն հաղթական է»:

Հնկ. Առաքելյանի զեկուցումից հետո բացվեց մտքերի փոխանակություն:

Հնկ. Մ. Հասրաթյանը իր ելույթում ասաց, երբ որևէ երկիր ունի պետականություն և նրա ժողովուրդն ու կուլտուրան ենթակա չեն ասիմիլացիայի, չպետք է վախենալ բառերի փոխառությանններից, միայն անհրաժեշտ է բառակազմությունը կատարել հաջող, որպեսզի հեշտ լինի արտասանելու:

Բարբառներից անհրաժեշտ է վերցնել հատկապես այն բառերը, որոնք հոմանիշներ չունեն զրական լեզվում:

Հնկ. Վ. Ոսկանյանն ասաց. չպետք է խուսափենք փոխառություններից և արհեստական անջրպետ ստեղծենք մեր և ռուսական լեզվի միջև: Ինչ կարիք կա, օրինակ՝ թարգմանել այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ կոնստիտուցիա, սովետ և այլն: Լեզվի խնդիրն է ծառայել մարդկանց որպես հաղորդակցության միջոց: Ինչո՞ւ արհեստականորեն մեծացնել այն անջրպետը, որ ստեղծվել է լեզուների միջև: Չպետք է փոխել օտար լեզուներում, այդ թվում նաև ռուսերենում օգտագործվող բառերի ուղղագրությունը: Օրինակ՝ կոմունիստ բառը բոլոր լեզուներում գրվում է երկու մ-ով, իսկ հայերենում, անհասկանալի պատճառներով, գրում են մի մ-ով և զժվարացնում մեր մատաղ սերնդի ուսուցման գործը:

Անհրաժեշտ է միօրինակություն հաստատել հայերեն և ռուսերեն տերմինների միջև: Հարկ չկա ֆեոդալ բառը ավատատեր թարգմանել, բանի որ ֆեոդալ և ֆեոդալիզմը հանրահայտ են ու հասկանալի բոլորին: Գրաբարը եղել է հայ ժողովրդի մի մեծ զանգվածի համար ընդհանուր լեզու: Պատմության ընթացքում նա սնել է աշխարհաբարին, թեպետ և կղզիանալով ու բարբառների կենսունակ տարրերն օգտագործելուց խուսափելով, աստիճանաբար մահացել է: Գրաբարից և բարբառներից ուրոշ փոխառություններ կատարելը անխուսափելի է, միայն պետք է խուսափել բարբառայնությունից և գրաբարի օգտագործման չարաշահումից: Չպետք է խուսափել հայոց լեզուն ռուսական ոճերով հարստացնելու ձգտումից, պետք է վերցնել այնպիսի ոճեր, որոնք հեշտ հասկանալի են և կարող են ավելի ճկուն դարձնել մեր լեզուն:

Հնկ. Մ. Իսրայելյանը ասաց, պետք է ուժեղացնել պայքարը հայերեն լեզվի մաթրոթյան համար, հիմք ընդունելով «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» մարքսիստական ֆորմուլան: Պետք է հայոց լեզուն ազատ պահել արխայիզմից, գրաբարյան այնպիսի տարրերից, որոնք կենսունակ չեն: Պետք է խուսափել ոչ թե բարբառից, այլ բարբառայնությունից, լեզուն հնարավորության սահմաններում մաքուր պահել ամեն տեսակի օտարամոլությունից:

Հնկ. Ար. Միրզոյանը ասաց, որ շատ հաճախ թարգմանիչները, հայերենում որոշ տերմիններ չլինելու պատճառով, ստիպված են լինում այդ տերմինի փոխարեն ստեղծել արհեստական բառեր, որոնք չեն մերվում մեր լեզվի մեջ և անհասկանալի են իրենց իմաստով:

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

1951 թվի ապրիլի 16-ին Հայկական ՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան Գրականության ինստիտուտում տեղի ունեցավ դիսկուսիա, նվիրված հայոց լեզվի մաթրոթյան հարցերին:

Ինստիտուտի դիրեկտոր, պրոֆեսոր-դոկտոր Մ. Մկրյանն իր ներածական խոսքում նշեց ընկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունների հսկայական նշանակությունը. հայոց լեզվի մաթրոթյան հարցը լուսարանելու գործում: Սովետական իշխանության տարիներին, ռուս մեծ ժողովրդի ճոխ և հարուստ լեզվի բարերար ազդեցությամբ, ժողովրդական տնտեսության հարաճուն վերելքի հետ միասին, զարգացել ու հարստացել է հայոց լեզուն. հայոց լեզվի մեջ մուտք են գործել բազմաթիվ նոր բառեր ու արտահայտություններ. ըստ որում այդ գործում նշանակալից դեր են կատարել մարքսիզմի կլասիկների երկերի և ռուս մեծ գրականության եր-

կերի թարգմանությունները: Դուրս են ընկել շատ բառեր, կատարելագործվել է բերականական կառուցվածքը:

Հնկեր Ստալինի լեզվաբանական հանճարեղ աշխատությունների լույսի տակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել հայոց լեզվի մարտության հարցին — մի հարց, որ սերտորեն կապված է սովետահայ գրականության հետագա զարգացման հետ: Հայաստանի բուլժնիկների 15-րդ համագումարում ընկ. Դր. Հարությունյանը միանգամայն տեղին քննադատեց մեր լեզվաբաններին, որոնք դեռ անհրաժեշտ հետևություններ չեն արել ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատություններից. դեռ չեն լուծված մի շարք կարևոր հարցեր:

Ընկ. Մ. Մկրյանը նշում է, որ մեր լեզվաբանները դեռ պարզ չեն պատկերացնում գրաբարի պատմությունը: Սխալ է միանգամայն, թե գրաբարը հենց սկզբից եղել է ֆեոդալական, իշխող դասակարգի լեզու, մի սխալ, որ գալիս է Մառի վուլգար սոցիոլոգիայից: Եղել են մարդիկ, որ իդեալականացրել են գրաբարը: Այժմ էլ կա տենդենց, որ գրաբարի օգտագործմանը դիմողները երբեմն մոռանում են, որ գրաբարը վաղուց մեռած ու կաստայական լեզու է եղել, որի դեմ պայքարել են մեր առաջավոր գրողներն ու մտածողները՝ Խ. Աբովյանը, Միք. Նալբանդյանը, Ստ. Շահումյանը և ուրիշները:

Գրաբարը հայ ժողովրդի կազմավորման շրջանում եղել է որևէ ցեղախմբի, հավանաբար Հայասա ցեղային միության լեզուն, որը հաղթող է դուրս եկել իր մեջ ձուլված մյուս ցեղերի լեզուների նկատմամբ: Նրա նախնական վիճակը գուսանական այն երգերի մեջ է, որ ընրում են մեր պատմագիրները: Այդ երգերի լեզուն ավելի պարզ է ու հասկանալի, քան ոգրոց լեզուն:

Սկսած 6-րդ դարից՝ հայ պետականության վերացման պայմաններում, նաև հունարան դպրոցի ազդեցությամբ, գրաբարն աստիճանաբար կտրվում է կենդանի խոսակցական լեզվից և սկսում է մահանալ, իսկ համաժողովրդական լեզուն զարգանում է իր ներքին օրինաչափություններով:

Այս կապակցությամբ ընկ. Զավեն Դրիգորյանն իրավացիորեն քննադատում է մեր մի շարք լեզվաբանների այն տեսակետը, որ իբր թե գրաբարի բայբայումից են առաջ եկել ներկա բարբառները, որ հնում իբր թե բարբառներ չեն եղել:

Ինչ վերաբերում է գրաբարի օգտագործման հարցին, — ասում է ընկ. Մկրյանը, — ապա մենք սկզբունքորեն դեմ չենք, որ օգտագործվի գրաբարը, նրա բառապաշարից վերցվեն այնպիսի բառեր, արտահայտություններ, որոնք հասկանալի են ժողովրդական լայն մասսաներին, հասարակության բոլոր անդամներին (օր. Դր. Նարեկացու ծիծաղախիտ բառը, որն օգտագործել է գեղեցիկ կերպով Քումանյանը, Տսիրաբողբոջ և ուրիշ մի շարք բառեր): Սակայն գրաբարում կան նաև բոլորովին անհասկանալի, խոսակցական լեզվից դուրս ընկած, հնացած բառեր ու արտահայտություններ (օրինակ՝ դարձյալ նույն Նարեկացու մոտ, մաւրահեղեղ, ահյունաճյուղ և այլն): Ահա այդ արխայիկ, անհասկանալի բառերից ու արտահայտություններից է, որ պետք է հրաժարվել իսպառ, ինչպես նաև գրաբարի բերականության օրենքներից: Մեր գրողները, ըստ սրում նույնիսկ լեզվի վարպետները (Դ. Դեմիրճյան, Ն. Զարյան և ուրիշները) մինչև վերջը չեն հրաժարվել գրաբարյան այդ արխայիկ և անհասկանալի բառերից, և մասնավորապես գրաբարյան շարադասությունից: Այս բոլորն արտահայտվում են, հատկապես, հերոսների խոսակցությունների մեջ:

Խոսելով բարբառների մասին, ընկ. Մկրյանը նշում է, որ ընկեր Ստալինը հանճարեղ կերպով ցույց է տվել, որ տեղակոսն (տեղիտորիալ) որոշ բարբառներ Կովկասի գոյացման պրոցեսում կարող են հանդիսանալ ազգային ինքնություն լեզուների հիմքը: Սակայն ոչ մի ազգ չի կարող ունենալ երկու լեզու (թեև տարբեր ազգեր կարող են խոսել նույն լեզվով): Հայերը որպես ազգ, ընկանորեն, չէին կարող ունենալ երկու ազգային լեզու՝ արևելահայ և արևմտահայ, ինչպես գտնում են լեզվաբաններից ոմանք: Մեր ազգային լեզուն հանդիսացել է հանդիսանում է արևելահայ աշխարհարարը: Ինչ վերաբերում է բարբառների օգտագործմանը, պետք է ասել, որ հնարավոր է օգտագործել ժողովրդական պարզ, խորիմաստ, դիպուկ բառերը, դարձվածքները, ասացվածքները, առածները, որոնք անշուշտ հարստացրել են և կհարստացնեն մեր լեզուն, բայց առհասարակ անընդունելի է, երբ գրողները իրենց գործը խճողում են բարբառային հատվածներով (այն էլ մեծ մասամբ ինքնահնար):

Մեր գրողներից ոչ բոլորն են տիրապետում հայոց լեզվին: Նրանց մոտ երբեմն նկատվում է բառապաշարի աղքատություն, բերականական սրենքների նկատմամբ անզգույշ և անփութ վերաբերմունք: Նրանք երբեմն սխալ են կազմում բառերը (օրինակ. ծխափսիս — Քր. Թափալցյանի մոտ, կամ՝ վրահաբ, նալադուր և այլն — Դ. Դեմիրճյանի մոտ): Կամ բառերը սխալ են գործածում (օր. Սիլասի մոտ՝ հնչյուն ծիծաղ, փոխանակ՝ հնչյուն ծիծաղի: Ն. Զարյանի

մոտ՝ անձուհի և Լուսինյան մաղում և այլն)։

Ընկեր Ստալինը սովորեցնում է, որ լեզուն չի կարելի կտրել մտածողությունից, լեզվական սխալը մեր գրողներին հասցնում է մտքի սխալի և ընդհանրապես։

Մեր խնդիրն է լայնորեն քննարկել հայոց լեզվի մաքրության հարցերը, օգնել մեր գրողներին հղկելու, բյուրեղացնելու իրենց երկերի լեզուն և աչակցելու հայոց լեզվի հետագա զարգացմանը։

Այս տեսակետից անհրաժեշտ է, որ լուրջ հետևություններ անեն մեր գրողները։

Ընկ. Մկրյանի ներածական խոսքից հետո բացվեց մտքերի լայն փոխանակություն, որին մասնակցեցին մի շարք ընկերներ։

Ընկ. Ա. Ղանալանյանը առաջ է քաշում ժողովրդական բանահյուսության բանաստեղծական արտահայտչական միջոցների օգտագործման հարցը։ Մեքենայում անելով Պուշկինից, Մ. Գորկուց, Հ. Թումանյանից, նա նշում է բանահյուսությունը գեղարվեստական գրականության մեջ օգտագործելու, նրանից բանաստեղծական խոսքի սեղմություն, պատկերավորություն սովորելու անհրաժեշտությունը։ Ժողովրդական բանահյուսության լեզուն օգտագործելու համար պետք է խորը կերպով ուսումնասիրել այն։

Հայոց լեզվի դարգացման և մաքրության համար մեծ նյութ կարող են տալ մեր հին առասպելները, հայ ժողովրդական էպոսը և մեր բարբառները, բայց դրանից պետք է վերցնել կարևորը, կատարել բառերի նուրբ և ուշադիր ընտրություն, վերցնել դիպուկ էպիտետներ, գեղեցիկ, հասկանալի և լակոնիկ բառեր։ Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ժողովրդական ասացվածքների, առածների և նրանց բանաստեղծական լեզվի օգտագործման վրա։

Հայոց միասնական լեզվի կազմավորումը, ընթացել է մոտավորապես նույն ձևով, ինչպես մոնղոլներին համաժողովրդական լեզվի։

Ընկ. Վ. Պարսիզունին լեզվական տեսակետից խոսելի է համարում Խ. Դաշտենցի «Խոսքի գեղան» վեպը, Սիրասի «Արարատ» վեպի շատ հատվածները։ Հերոսներին բարբառներով «սոսկեցնելը» ոճավորման սխալ ձև է. ոճավորումը պետք է կատարվի հերոսի հոգեբանական զարգացման պրոցեսը ցույց տալով, ինչպես անում է, օրինակ, Հ. Թումանյանը։ Սունդուկյանի, Պատկանյանի բարբառներով գրելը, պատմականորեն անհրաժեշտ էր, իսկ այժմ դիմել բարբառին՝ անտեղի է և ավելորդ։ Գրաբարից և բարբառներից մեր գրողներն արդեն վերցրել են հիմնականը, մնում է շնչին բան վերցնելու։ Մեր կենդանի լեզուն անընդհատ հղկվում է, բարելավվում է նրա բերականությունը։

Ընկ. Գ. Գրիգորյանը նշում է, թե լեզուն որքան մաքուր լինի, այնքան ճիշտ ու խորը կարտացոլվեն իրականությունն ու նրա երևույթները։ Ովքեր ճիշտ չեն արտացոլում իրականությունը, սխալ և վատ են գրում, լեզվի շփոթը մտքի շփոթից է առաջ գալիս։ Շատ հաճախ մեր հեղինակները բառերը սխալ են կազմում (օրինակ՝ յոթնաբայան և այլն — Ս. Զարյան), որից պետք է խուսափել։ Գրաբարը համաժողովրդական լեզու է եղել, նրա և առասպելների միջև տարբերություն չկա. նրանք նույն լեզվի դարգացման տարբեր աստիճաններն են, թեև առասպելների լեզուն ավելի հասկանալի է, բան հորենացումը։ Հինգերորդ դարից սկսվում է գրաբարի մահացումը։ Համաժողովրդական լեզուն երկու գծով է զարգանում, առասպելների լեզուն տանում է դեպի Ֆրիկի լեզուն, հորենացում լեզուն գնում է Մագիստրոսի լեզվի ուղղությամբ, դառնում է դասակարգային ժարգոն և իրեն դատապարտում մահացման։

Ընկ. Հ. Մուրադյանը գտնում է, որ հայ նշանագրերի ստեղծման ժամանակ մեր գրավոր լեզուն և ժողովրդի խոսակցական լեզուն միևնույնն են եղել։ Հակառակ դեպքում ինչ միտք ունեք հայ ժողովրդի համար անհասկանալի ասուրները կամ հունարենը փոխարինել մի երրորդ անհասկանալի լեզվով։ Գրաբարի հեռացումը ժողովրդական լեզվից երկարատև պրոցեսի առկայություն է։ Նույնիսկ պատմական դարաշրջան կազմող հեղաշրջումները լեզվի մեջ առաջ չեն բերում արմատական, որակական փոփոխություններ։

Լեզվի մաքրության հարցը սերտորեն կապված է լեզվի մեծ ֆունկցիայի հետ, պետք է զարգացնել լեզուն, որպեսզի այն կատարի իր ֆունկցիան։ Մենք չենք կարող ուսմաններ հրամցնել մեր գրողներին, բայց սկզբունքորեն պետք է արգելել մեռած, գունդիկ, անտեղի բառերի գործածումը, բերականական կանոնների խախտումը և այլն։ Պուշկինը մեծ շնորհակալությամբ է նշել իր թույլ տված սխալների մատնացույց արվելը, մինչդեռ մեր որոշ հեղինակներ հիվանդագին են ընդունում իրենց լեզվի նկատմամբ արված դիտողությունները։

Ընկ. էգ. Թոփչյանը հիշեցնելով, որ ՀԿ(Բ)Պ 15-րդ համագումարը նշեց սովետահայ արձակի ետ մնալը, ասում է, որ այդ ետ մնալու հիմնական պատճառներից մեկը մեր գրողների երկերի լեզվի մեջ պետք է որոնել։ Մ. Գորկին քննադատել է այն գրողներին, որոնք օգտագոր-

ծել են բարբառներից վերցրած անհասկանալի բառեր և բերականական ձևեր. այդպիսի օրինակներ կան նաև մեր դրականություն մեջ: Չպետք է մոռանալ, որ մենք գրում ենք մեծ կուլտուրա ունեցող սովետական մարդու համար: Թե՛ գրաբարից, թե՛ բարբառներից վերցրած, թե՛ նորաստեղծ, թե՛ ներմուծած բառերն ու արտահայտությունները պետք է լինեն տեղին, բխեն կյանքի պահանջից, օգնեն մեր աշխատանքին ու պայքարին: Լեզվի շփոթը հասցնում է իրականության սխալ պատկերմանը: Լեզուն և զրական վարպետությունը սերտորեն կապված են միմյանց հետ: Գրողը պետք է տիրապետի լեզվին, ինչպես նորարար բանվորը՝ իր տեխնիկային և տիրապետում:

Ընկ. Թովչյանը քննադատում է լեզվարան Գ. Սևակին, որը անհիմն կերպով փորձում է նվազեցնել հայ կլասիկների գերը մեր լեզվի զարգացման գործում: Ընկ. Էդ. Թովչյանը միաժամանակ նշում է, որ մեր կլասիկներից ոմանց օրինակին չպետք է հետևեն մեր գրողները — բարբառներից օգտվելու հարցում, ինչպես, օրինակ, Գ. Սունդուկյանին, որի լեզուն պետք է համարել անցած էտապ: Խորապես սիրելիով հանդերձ Ավ. Իսահակյանին, որն, անշուշտ, բանաստեղծական խոսքի մեծ վարպետ է, — ասում է ընկ. Թովչյանը, — չի կարելի շնչել, որ նա ևս չերբեմն ճիշտ դիրքերից չէ, որ օգտագործել է բարբառ (մանավանդ բերականությունը), որին և հետևել են մեր որոշ երիտասարդ պոետներ (օր. Հովհ. Շիրազ): Հայոց լեզվի զարգացման պրոցեսը ընթանում է ճիշտ ճանապարհով, այն անընդհատ հարստանում ու զարգանում և հղկվում է, շրջվելով ողու մեծ ժողովրդի լեզվի հետ, կատարելագործում իր բերականական կառուցվածքը: Մեր գրողներն ու գրականագետները պետք է հետևեն այդ պրոցեսին, օգնեն նրա առաջընթացին:

Ընկ. Գ. Ստեփանյանն իր ելույթում ասաց. — Լեզվի զարգացման հարցերը քննելիս ամենից առաջ պետք է ցուցաբերել պատմական մոտեցում: Գրաբարի դեմ 19-րդ դարի կեսերին շատ ավելի ուժգին պայքար է ծնվել, քան հետագայում, սակայն գրաբարը շատ ավելի կենսունակ է եղել այդ տարիներին, քան այժմ: Այդ միտնգամային հստակությանի է և՛ Այն աշխարհաբարը, որով պայքարում էին գրաբարի դեմ Նալբանդյանն ու Նազարյանցը, դեռ նոր էր ձևավորվում, մի ոտը գրաբարի մեջ էր, և պայքարը ոչ թե մղվում էր գրաբարը շօտագործելու համար, այլ գրաբարը նոր լեզվի հիմք շղարձելու համար: Այլապես ծիծաղելի կլինեք պատկերացնել գրաբարի օգտագործման քաջարժակ ժխտումը այնպիսի մարդկանց կողմից, որոնց լեզուն ամենևին էլ չէր ազատագրված գրաբարից (Նալբանդյան, Նազարյան և ուրիշներ):

Միտնգամային տարբեր է գրությունը այժմ: Ընկ. 30 տարիների ընթացքում աննախընթաց չափով աճած, զարգացած ու պետական լեզու դարձած հայերենը, որով արտահայտվում են աշխարհի ամենաառաջավոր երկրի տնտեսական ու կուլտուրական վիթխարի նվաճումները, աննշան չափով միայն կարող է դիմել գրաբարի օգնությանը: Նոր երևույթները, դիտական, տեխնիկական նոր նվաճումները արտահայտող բառեր ստեղծել միայն ներքին հնրավորություններով, անիմաստ է, վնասակար ու դրա տենդենցն է՝ մեկուսացում այն խոշոր լեզվաշինարարական նվաճումներից, որին հասել են ՍՍՄԽ բոլոր ժողովուրդները: Որպես օրինակ բերենք մի բառ, տեղեկիվոր բառը, որ այժմ մեր մամուլում թարգմանվում է նեոուստատեսություն: Նախօրոք կարելի է ասել, որ այդ բառը չի ընդհանրանա այնպես, ինչպես շրջահանրացան 1924—1926 թվերին լույս տեսած տերմինաբանական բառարաններում տեղ գտած հարյուրավոր նման բառեր:

Բարբառների օգտագործման մասին խոսելիս ևս պետք է նույն պատմական մոտեցումն ունենալ: Աշխարհաբար լեզուն իր զարգացման առաջին տարիներին չէր կարող այնպիսի դիրք բռնել բարբառների նկատմամբ, ինչպես կարող է բռնել այժմ՝ սովետահայ ճոխ ու զարգացած լեզուն: Ժողովրդի հարուստ բառական ֆոնդի և լեզվական հնարավորությունների օգտագործումից չէին հրաժարվում հայ առաջավոր մտածողները: Փորձեցեք հանել չ. Թումանյանի երկերից և ուրիշ բարբառ, ապա այդ երկերը կկորցնեն իրենց թարմությունն ու ուժը, անմիջականությունն ու հարազատությունը, որով նա հասնում է բոլորին, և՛ ծերունուն և՛ դպրոցականին:

Բայց այժմ կարող են խորհուրդ տալ մեր գրողներին, որ օրինակ վերցնեն Թումանյանի լեզվից: Ոչ, Այժմյան մեր կյանքը արտացոլող հեղինակը չի կարող գտնել Թումանյանի հեռունքներին իրենց և ուրիշ բարբառով դատողություն անելիս, այլ կգտնի նրանց ժառանգներին, նոր սերնդին, որը շնորհիվ սովետական կարգերի՝ դարձել է համատարած գրագետ, խոսում է նոր, սովետահայ գրական լեզվով և այդ լեզուն օգտագործում կոմունիզմի կառուցման համար:

Ո՞րն է մեր կյանքի համար տիպականը, և ուրիշ ձևերում իրենց բարբառով խոսող, Թալինի շրջանում Սասնա բարբառով խոսող մի քանի տասնյակ ծերունիների կյանք, թե՛ նրանց նոր սերնդի՝ հարյուր հազարների սոցիալիստական առօրյան:

Այս բանի անտեսումից է առաջանում մեր մի շարք գրողների սխալը: Այդ գրողները փոխանակ պրականության մեջ մտցնելու մեր նոր կյանքի համար բնորոշը, մտցնում են ոչ տիպականը, իր դարն ապրած, արգեն անհետացող երևույթները:

Մեր լեզուն իր հարաճուն զարգացման մեջ կարիք ունի այնպիսի տերմինների, որոնք արտահայտում են մեր նոր՝ սոցիալիստական հասարակարգի նվաճումները: Հետևաբար անհրկյուղ պետք է վերցնել գիտական, մասնագիտական, տեխնիկական այն տերմինաբանությունը, որը ընդհանուր է Սովետական Միության շատ լեզուների համար և գալիս է ոուս մեծ ժողովրդի լեզվի միջոցով, միաժամանակ պետք է օգտագործել մեր լեզվի ներքին հնարավորությունները, ստեղծել մտածված ու մեր առօրյայից բխող բառեր: Ամենևին չպատենշելով հանդերձ սովետահայ լեզուն գրաբարից և բարբառներից, նրա հարստացման և ճոխացման մասին մտադողները պետք է ամենից առաջ նայեն դեպի առաջ և ոչ թե դեպի ետ, պետք է նկատի ունենան ռասալական կյանքի թելադրանքը, պահանջը:

Ընկ. Ն. Սարգսյանը իր ելույթը նվիրում է Մ. Նալբանդյանի լեզվաբանական հայացքների լուսարանման հարցին և մեջբերումներ անելով ցույց է տալիս, որ հայ հանճարեղ ուղղուցիներ-դեմոկրատ և մեծ մտածողը, միանշամայն ճիշտ մոտեցում է հանդես բերել դրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերության հարցում: Գիտակցական, հետևողական պայքար մղելով գրաբարի դեմ՝ այն համարելով «մեհենական» անմատչելի լեզու, Մ. Նալբանդյանը իրավացիորեն նշում է, որ պետք է օգտագործվի նրա բառարանային ֆոնդը, ինչպես և բարբառները, սակայն լեզվի զարգացումը պետք է ընթանա աշխարհաբարի ուղղությամբ:

Ընկ. Ստ. Զորյանը նշում է բարբառների օգտագործման այն մեծ վարպետությունը, որ հանդես է բերել Հ. Թումանյանը: Սովորելով նրանից, մենք պարտավոր ենք դրսևորել բարձր կուլտուրա, նուրբ ճաշակ, կարողանանք վերցրած բառերն ու արտահայտությունները մերել, ձուլել նախադասության մեջ: Ընկ. Զորյանը գտնում է, որ մեր լեզվի մեջ, երբեմն պակասում են հոմանիշները, մի պակաս, որ հնարավոր է լրացնել գրաբարից ու բարբառներից վերցրած բառերով: Մեր լեզվում կան բառեր, որ երկար են, դժվար ընկալվող (օր. սրախտղխող և այլն). պետք է գտնել դրանց համապատասխան ավելի կարճ, դիպուկ բառեր:

Ընկ. Է. Պիվաղյանը խոսում է գրաբարի մահացման, միջին հայերենի և աշխարհաբարի առաջացման մասին, ապա քննադատում է «Սովետական Հայաստանում» տպագրված «Հայ մեծ մտածողն ու լեզվաշինարարը» վերնագրով հոգվածը՝ Միք. Նալբանդյանի մասին, որի մեջ կասեցի շարք շինծու բառեր ու արտահայտություններ, ինչպես շրջափուլ, բազմապարփակ, իմացալիան շանկի մեծ շառավիղ և այլն:

Պրոֆ. Հով. Մելիքյանն այն կարծիքն է հայտնում, որ գրաբարն ու համաժողովրդական լեզուն 5-րդ դարում մոտավորապես նույն հարաբերության մեջ են եղել, ինչ այժմ մեր գրական ու խոսակցական լեզուն. ապա սկսվել է գրաբարի հեռացումը, որը շարունակվել է հետագա դարերում: Նա քննադատում է ոչ միայն մեր գրողներին, այլև քննադատներին՝ լեզվական սխալներ թույլ տալու մեջ: Նշում է, որ արևելահայերենն ու արևմտահայերենը նույն լեզուն են և գտնվում են նույն հարաբերության մեջ, ինչ Ուկրաինայի և Կարպատյան Ուկրաինայի ժողովուրդների լեզուները: Հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները, ֆաշիզմի լակեյներ դաշնակցականներն են, որ մեր միասնական լեզուն մասնատում են: Նրանք պետք է իմանան, որ Դ. Վարուժանի, Մ. Պեշիկթաշլյանի, Հ. Պարոնյանի իսկական ժառանգները մենք ենք՝ սովետական հայ ժողովուրդը:

Ընկ. Դ. Դեմիրճյանն ասում է. անհրաժեշտ է պայքարել պարզ, կանոնավոր շարադասության, բերականական օրենքների ճիշտ կիրառման համար: Ամեն անգամ պետք է հիշել, որ բարբառը և՛ տրամաբանական են, և՛ պայմանական. եթե անատոմիա բառը բազմակի մաքրակազմությամբ, կլինի անտրամաբանական, որովհետև չի կարելի ասել կենդանիների մաքրակազմություն, բայց օր.՝ հրանք բառը պայմանական է. այն մենք հասկանում ենք ոչ թե կրակի անոթի մաստով, այլ որպես զենքի մի տեսակ: Ընկ. Դեմիրճյանն այն միտքն է հայտնում, որ հերոսներին ոճավորելու, ժամանակի պատրանք ստեղծելու համար գրողը չի կարող չդիմել գրաբարին կամ բարբառներին՝ հայած թե ինչ է նրա թեման և ո՞ր շրջանից: Խոսելով հայոց լեզվի մասին՝ կյանքի բոլոր մարզերում, ընկ. Դեմիրճյանը ցույց է տալիս մի շարք սխալներ ոչ գեղարվեստական երկերում (օրինակ բժշկական այստուգ բառը): Բարբառներից պետք է օգտվել, այնտեղ կա դիպուկ և խորիմաստ բառեր (օր. ձալմաշ):

Ս. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐՈՒՄ

Սույն թվի փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Արվեստների պատմության և տեսության սեկտորի ընդլայնված նիստը:

ՔՀայկական զարդարվեստի ծագման և բովանդակության հարցերը թեմայով դեկույցեղ ընկ. Աս. Մնացականյանը:

Զեկուցողը առաջ բաշեց այն հարցը, որ ստիլիզացված բուսական զարդերի (օրնամենտ) ծագումը կապված է ժողովրդական հնագույն պատկերացումների հետ: Նա հարուստ փաստերով ցույց տվեց, որ նշված զարդերն իրենցից ներկայացնում են կենաց ծառերի ու նրանց զանազան մասերի (հատկապես պտուղի, հատիկի, տերևի, ծաղկի) խիստ բազմազան հյուսումներ, որոնց մեջ, որպես պտղաբերության զաղափարի սիմվոլ, ընդգծված են վարսանդ-պտղային ձևերը: Զեկուցման մեջ նշվեց, որ այդ զաղափարները սկիզբ առնելով հնագույն ժամանակներից, զարգանում են հատկապես երկրագործության երևան գալուց հետո, երբ ձևավորվում է սիրտ և պտղաբերության պաշտամունքը: Զեկուցողը կանգ առավ նաև կենաց ծառերի ֆոնի վրա հանդես եկող սյուժետավոր զարդերի վրա, ցույց տալով այնտեղ բարի ու չար ուժերի բախումը որպես վիշապամարտի տեսարաններ, նշելով, որ դրանց հիմքում ընկած է այն պայթյալը, որ մարդկությունը մղել է իրեն ճնշող ուժերի դեմ:

Զեկուցողը շեշտեց, որ այդ արվեստը տարբեր դարերում և տարբեր դասակարգերի կողմից տարբեր ձևով է զարգացել ու ընկալվել: Քրիստոնեությունը ևս օգտագործել է այն՝ իր նպատակների համար: Բայց, անկախ այդ բոլորից, զարդարվեստը հիմնականում եղել է ժողովրդական դիցաբանական պատկերացումների արդյունք և զարգացել է ժողովրդի հանճարի շնորհիվ:

Ընկեր Մնացականյանը կենաց ծառերի մոտիվներ ցույց տվեց նաև «Վիշապ» կոչվող բարակոթողների, ուրարտական և այլ ծագում ունեցող մի շարք հուշարձանների վրա, որոնց բովանդակությունը մինչև օրս պատշաճորեն չի բացահայտված և փորձեց տալ նոր բացատրություն:

Զեկուցումից հետո հանդես եկան մի շարք ընկերներ, որոնք ընդգծեցին ընկ. Մնացականյանի կատարած աշխատանքի կարևոր նշանակությունը, կատարեցին որոշ դիտողություններ և ցանկություն հայտնեցին հրատարակել նրա գործը: